



2015 PUBLIC EXAMINATION

Armenian

Continuers Level

Section 1: Listening and Responding

Transcript

Section 1, Part A

Question 1, Text 1

- Յաճախորդ:** Հայրօ՛, բարեւ, ես կը փափաքիմ տոմսեր պատուիրել ուրբաթ, Յունիս 21-ին համար:
- Տոմսավաճառ:** Խնդրեմ, քանի՞ տոմս պէտք ունիք:
- Յաճախորդ:** 4 տոմս որոնցմէ մէկը 7 տարեկանի համար է:
- Տոմսավաճառ:** Կը ներէք, բայց այդ օրուայ համար միայն 2 տոմս ունինք:
- Յաճախորդ:** Իսկ յաջորդ օրուայ համա՞ր:
- Տոմսավաճառ:** Այո, ունինք: Կրնամ ձեզի բաւական լաւ տեղեր առաջարկել:
- Յաճախորդ:** Շատ լաւ, իսկ ինչպէ՞ս կրնամ տոմսերը ժամանակին առնել:
- Տոմսավաճառ:** Կրնաք այստեղէն առնել կամ ալ մենք փոստով կը դրկենք:
- Յաճախորդ:** Ո՛չ, պէտք չունիք դրկելու: Տղուս աշխատաւայրը ձեզմէ հեռու չէ: Իրմէ կը խնդրեմ որ դայ եւ առնէ:

Question 2, Text 2

Վարդան: Բարե՛ւ, Սոնա: Վաղը ընկերոջս համար անանկնկալ ծննդեան տարեդարձ ենք կազմակերպել: Մտածում էի, արդեօք կը ցանկանայի՞ր ինձ ընկերակցել:

Սոնա: Կատա՞կ ես անում, Վարդան: Ո՛վ է տեսել աղջկան մէկ օր առաջ տարեդարձ հրաւիրեն:

Վարդան: Սակայն, ի՞նչ տարբերութիւն, մէկ օր առաջ, թէ մէկ շաբաթ:

Սոնա: Շա՛տ մեծ տարբերութիւն: Ես պէտք է նոր հագուստ ու համապատասխան կօշիկներ գնեմ: Իրա համար ժամանակ է հարկաւոր:

Վարդան: Ի՞նչ, միթէ՞ օձեր տունը գող է մտել ու բոլոր կօշիկներդ ու հագուստներդ գողացել:

Սոնա: Ես չեմ կարող արդեն մէկ անգամ հագած հագուստներս նորից հագնել: Ուզում ես բոլորը ծիծաղե՞ն ինձ վրայ:

Վարդան: Բայց ինչու՞ պիտի ծիծաղեն:

Սոնա: Ես միշտ բոլորի ուշադրութեան կենդրոնում եմ:

Վարդան: Լաւ, պարզ է: Դու չես հասցնի մինչեւ վաղը այնպիսի զգեստ գնել, որ բոլորը քեզ նայեն: Այդ դեպքում ես իմ ծրագրերը կը փոխեմ:

Սոնա: Ի՞նչ նկատի ունես ծրագրերդ փոխելով:

Վարդան: Ես մեր դասարանի Սաթիկին կը հրաւիրեմ:

Սոնա: Ու՞մ, Սաթիկի՞ն: Վարդան, դու դեռ չես հասկանում իմ կատակները: Իհարկէ, ես վաղը գալիս եմ քեզ հետ:

Question 3, Text 3

Արդեոք կը փնտրէ՞ք բարձրակարգ հիւրանոց մը, ուր կրնաք չքեղ սենեակ պատուիրել նուազագոյն արժէքով:

Նորակառոյց եւ իր տեսակին մէջ եզակի «Աստղիկ» հիւրանոցը իր դռները բացեց բոլորին առջեւ՝ առաջարկելով սենեակներ, ուր դուք ձեզ կը զգաք թէ կը գտնուիք ձեր տան մէջ՝ առանց աւելորդ վճարումներու: Հիւրանոցի աջ թեւը, որը յատուկ կառուցուած է գործարար մարդկանց համար, ունի մեծ եւ փոքր սենեակներ՝ գործնական հանդիպումներու համար: Այդ սենեակները կահաւորուած են նորագոյն ելէքթրոնային սարքաւորումներով:

Հիւրանոցին ճաշարանը յատուկ զեղչով գիներ ունի իր հիւրերուն համար, ուր կրնաք ձեր ընթրիքը պատուիրել 50 տոկոս զեղչով: Այս դեռ ամէնը չէ: Հիւրանոցը կ'առաջարկէ նաեւ, մէկ օրուայ անվճար վարձակառքի (թաքսիի) ծառայութիւն յատուկ ձեզ համար: Կայ եւս մէկ անվճար առաջարկ հիւրանոցին կողմէ: Բոլոր հիւրերը կը ստանան մէկ անվճար օպերայի տոմս:

Մեր հիւրերը արժանի են միայն լաւագոյն սպասարկութեան եւ մենք այդ կը խոստանանք իրենց:

Եթէ դուք կ'ուզէք արքայաւայել ապրիլ, ուրեմն այս է հիւրանոցը ձեզ համար:

Section 1, Part B

Question 4, Text 4

- Ֆակոր:** *Բարեւ ձեզ, տիկին Աւետեան: Ես եկել եմ հարցազրույցի գրասենեակում որպէս օգնական աշխատելու համար: Անուն Յակոր է:*
- Տիկ Աւետեան:** *Բարեւ, Ֆակոր: Դու երբեւէ գրասենեակում աշխատե՞լ ես:*
- Ֆակոր:** *Ոչ իսկ դա կարելո՞ր է: Պիտի նշեմ, որ ես երեք տարբեր աշխատավայրում եմ աշխատել:*
- Տիկ Աւետեան:** *Ըմ...բայց ոչ գրասենեակում: Ասա՛, թէ որտեղ ես աշխատել:*
- Ֆակոր:** *2 ամիս պիցցայի խանութում, 3 ամիս սրճարանում եւ մէկ շաբաթ էլ կօշիկի խանութում:*
- Տիկ Աւետեան:** *Եւ որքա՞ն ժամանակ ես պատրաստում մեզ մօտ աշխատել:*
- Ֆակոր:** *Յուսով եմ, աւելի երկար, քան նախորդ աշխատավայրերում: Ինձ ոչ մի տեղ երկար չեն պահում, քանի որ երբէք ժամանակին չեմ հասնում աշխատանքի:*
- Տիկ Աւետեան:** *Իսկ մեզ մօտ աշխատելի՞ս էլ պիտի ուշանաս:*
- Ֆակոր:** *Ոչ, խօստանում եմ միշտ ժամանակին գալ եւ շատ լաւ կատարել պարտականութիւններս:*
- Տիկ Աւետեան:** *Իսկապե՞ս: Վստահ եմ, նման խօստումներ նախորդ աշխատավայրերում էլ ես տուել: Ճի՞շտ եմ:*
- Ֆակոր :** *Դէ ես մեղաւոր չեմ, որ մայրիկս մոռանում է ինձ ժամանակին արթնացնել կամ էլ գարթուցիչը ժամանակին չի արթնացնում:*
- Տիկ Աւետեան:** *Ֆակոր, դու պէտք է յոյսդ քեզ վրա դնես, որպէս հասուն մարդ: Թեկնածուներ ընտրելիս այդ չափանիշը շատ կարեւոր է մեզ համար:*
- Ֆակոր:** *Յոյսով եմ, որ ինձ կը յաջողուի ստանալ այս աշխատանքը, տիկին Աւետեան:*

Question 5, Text 5

Լուսինէ: *Ռուբէն, չես պատկերացներ, թէ որքան հիասթափուած եմ մեր սիրելի մարզական խումբէն, այս պարտութեան պատճառով:*

Ռուբէն: *Լուսինէ, ես այլ քեզի պէս հիասթափուած եմ, բայց մարզական աշխարհին մէջ առանց պարտուելու ոչ մէկը առաջ չ'երթար:*

Լուսինէ: *Ձեմ հասկանար քեզի: Հիմա մեր սիրած խումբը, այս պարտութեան պատճառով 2-րդ տեղէն իջաւ 5-րդի, եւ դուն այդ առաջ երթալ կը համարես^օ:*

Ռուբէն: *Ձէ, ես այդ նկատի չունիմ: Կ'ուզեմ ըսել, որ այս պարտութիւնը իրենց կ'օգնէ, որ աւելի լաւ մարզուին:*

Լուսինէ: *Դուն իրօք կը հաւատա^օս ատոր: Ես կը կարծեմ, որ այլեւս այդ խումբին հետեւորդը չեմ բլլար: Անկէ գատ ալ, ես կը կարծեմ, որ իրենց նոր մարզիչը այնքան ալ լաւը չէ:*

Ռուբէն: *Ես այդ հարցով քեզի հետ համաձայն եմ: Բայց մեր խումբը հիմա իր երկրպագուներուն աջակցութեան կարիքը ունի, որը իրենց ուժ կու տայ եւ նորէն կը յաղթեն:*

Լուսինէ: *Ձէ, ես պարտուողներուն չեմ սիրեր, յատկապէս, եթէ անոնք կը պարտուին, որովհետեւ շատ չեն մարզուիր եւ ամբողջ հոգուով ու սրտով չեն խաղար:*

Ռուբէն: *Ես կը կարծեմ, որ դուն սխալ ես: Անոնք իրենց լաւագոյնը կընեն, բայց հակառակորդ խումբը շատ զօրաւոր էր այսօր:*

Question 6, Text 6

Հաղորդավար: «Մեր անտեսութիւնը այսօր» ռադիոհաղորդման հիւրն է «Համայնապատկեր» շուկայի տնօրէն Պրն Ռուբինեանը:

Պրն Ռուբինեան, մի քիչ պատմէք, թէ ինչպէս է ընթանում յետ-տօնական շրջանի առեւտուրը ձեր շուկայում:

Պրն Ռուբինեան: Յետ-տօնական առեւտուրը շատ աշխոյժ էր ընթանում: Ուրախ էինք, շուկայում տեսնելու ոչ միայն մեր մշտական յաճախորդներին, այլև բաւական մեծ թուով նոր գէմքեր: Պիտի նշեմ նաև, որ վաճառուեցին ոչ միայն մեծ գեղջ ունեցող ապրանքներ, այլև այնպիսի ապրանքներ, որ շատ քիչ էին գեղջուել:

Հաղորդավար: Կարծես, ձեր շուկան շատ զբաղուած է եղել տօնական օրերին:

Պրն Ռուբինեան: Այո, անհաւատալիօրէն: Այն առումով, որ անգամ անցեալ տարուանից մնացած ապրանքները վաճառուեցին: Մենք այնքան յաճախորդներ ունէինք առաջին օրը, որ յաջորդ երեք օրը ես աւելի շատ վաճառողներ աշխատանքի կանչեցի եւ նոյնիսկ մեր շուկայի աշխատանքային ժամերը երկարացրեցի:

Հաղորդավար: Այդ գէպքում ձեզ շնորհաւորում եմ նման յաջողութեան համար:

Պրն Ռուբինեան: Շնորհակալութիւն: Ես իսկապէս բաւարուած եմ այս տարուայ առեւտրից, եթէ չհաշուենք, որ այդ եռուգեռի մեջ որոշ ապրանքներ ուղղակի անհետացան՝ առանց վճարուելու: Յատկապէս դա զգալի էր արդուզարդի եւ օձանելիքի բաժնում: Դժբախտաբար, նման գէպքեր էլ պատահում են երբեմն:

Հաղորդավար: Իսկ դրանց նիւթական վնասը մե՞ծ էր արդեօք:

Պրն Ռուբինեան: Դեռ վաղ է վնասի լրիւ չափը որոշելու համար: